ները. Էջմիածնի սիմոնը բոլոր հայ ժողովուրդի բարոյական կենտրոն համարելով, անհանգիստ են լինում ապագայ այդ անմիաբանութեան պատճառով և ցանկանում են, որ ռուսաց գիպլոմատիան միջամուխ այդ գործին։»

—

«Helsingfors Dagblad» լրագիրը հաղորդում է, որ Ֆինլանդական զորքի և զինուորական մինիստրութեան մէջ Պետերբուրգում վարչական յարաբերութիւնների մասին հարցը վճռված է այն մտքով, որ զինուորական մինիստրութեան մէջ Ֆինլանդիայի հաշուով կը հիմնվի առանձին Ֆինլանդական բաժին, որի գլխաւորը ապագով Ֆինլանդացի կը լինի և յարաբերութիւն կունենայ ուղղակի մինիստրի հետ։

—

«Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Վարշավայում կազմակերպված է Մոսկվայից եկած մէկ մարդ, որը բանկային գրասենեակներից մէկում փոխանակել 40.000 բուբլու արժէքներ, որ նա գողացել էր Մոսկվայում։ Բանկային գրասենեակում ուշադրութիւն դարձրին վերոյիշեալ պարտնի կասկածելի վարմունքի վրա և մի քանի նախազգուշութիւններ արեցին, որի շնորհով պոլիցիային աջողվեցաւ կասկածելի կասկածելի պարոնին երկաթուղու կայարաններից մէկում։

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ ներ-կայ 1881 թուին համապատասխանների պահպանութեան համար նշանակված է անցեալ տարվանից 6,070 բուբլով պակաս գումար, այսինքն 2.476.893 բուբլ։ Փոստային ուղարկանների պահպանութեան համար նշանակված է 1.684.792 բուբլ, անցեալ տարվանից 72.517 բուբլով աւելի։ Պոստիլիոններ և ուղեցուցիչներ պատրաստելու և գիտական գանազան ձեռնարկութեանց համար նշանակված է 108.120 բուբլ։ 5.308 բուբլով պակաս քան անցեալ տարի։ Գիտութեանց ակադեմիաների պահպանութեան համար նշանակված է 277.360 բուբլ, անցեալ տարվանից 5.870 բուբլով աւելի։

—

«Русск. Вѣд.» լրագրին կազանից հեռագրում են, որ ուսանողների ընդհանուր ժողովում բոլոր ուսանողները միաձայն հրաժարվեցին ընդունել կազանի նահանգապետ պ. Սկոբելևի ձեռքից այն 6.000 բուբլ, որ հաւաքել է հասարակութիւնը հրաժարեցրած նահանգապետին ճաշ տալու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Ֆրանսիական քաղաքական նշանաւոր հարցը վերջին ժամանակներում կազմում է պատգամաւորներին ցուցակներով ընտրելու ձևը։ Այդ հարցը, որի գլխաւոր պաշտպանը Գամբետտա է և որ առաջարկվեց պատգամաւոր Բարդուից, գրաւեց Ֆրանսիայի քաղաքական բոլոր կուսակցութիւնների ուշադրութիւնը։ Եթէ այդ օրինագիծը չընդունվի, ամենքը յոգնված կը համարեն հանրապետականների արժանն առաջնորդ Գամբետտային։ Օրինագծի անաջողութիւնը շատ հաւանական է։ որովհետև նրան քննող մասնաժողովի մեծամասնութիւնը բաղկացած է նրա հակառակորդներից։

Գամբետտայի „République Française“ լրագիրը բոլոր միջոցներով աշխատում է ապացուցանել, որ մինչև այժմ գործածվող ընտրութիւնների եղանակը գաւառների համար վնասակար է հանրապետութեան շահերի համար։ Այդ եղանակը ընդունված է 1875 թուին հանրապետութեան թշնամիներից և այդ իրաւութիւնը արգելն ունեցել է անում ընտրութիւնների այդ եղանակի անպիտանութիւնը Ֆրանսիայի համար։ Բացի այդ լրագիրը հեռակա գաւառութիւններ է անում։ Ընտրութիւնները գաւառների համար, զարթեցներով տեղական երևելիների փառասիրութիւնը, անմիաբանութիւն են սերմանում մինչև անգամ ամենաանշան քաղաքների և գիւղերի մէջ, իսկ այդ անմիաբանութիւնները բոլորովին նման չեն քաղաքական կուսակցութիւնների պատուաւոր կռիւին։ Ընտրողական այդ ձևը ջնջում է պատգամաւորի արժանաւորութիւնը, որովհետև նա ստիպված է լինում անդադար միջնորդել կառավարութեան առաջ իր ընտրողների շահերի համար։ Նա ջնջում է տեղական վարչութիւններին, որովհետև պատգամաւորների ընտրողական շահերը արգելք են դնում մինիստրների ազատ կարգադրութիւններին։ Այդ ձևը պարլամենտական հասատատ մեծամասնութիւն չէ տալիս և անկարելի է դարձնում պարլամենտական կանոնաւոր կառավարութիւնը։ Բացի այդ ընտրութիւնների ձևը գաւառների համեմատ արգելում է, որ բնակիչները իրանց պատգամաւորներին ընտրելու ժամանակ միատեսակ իրաւունքներ ունենան, այնպէս որ Ֆրանսիայի մի կէսը ընտրում է 317 պատգամաւոր, իսկ միւս կէսը միայն 209։ Պատգամաւորների ժողովի մի կէսը ներկայացնում է 22 միլիոն ֆրանսիացիներին, իսկ միւս կէսը միայն 14 միլիոն։

Քաղաքական այդ հարցի փոխանակը շատ փաղանց հետաքրքրում է ամբողջ Եւրոպային և մանաւանդ Գերմանիային, որովհետև եթէ ընդունվի ընտրութիւնների եղանակը ցուցակների համեմատ, Գերմանիային տանելի Դամբետտա կարող է մի քանի գաւառների մէջ ընտրվել և այդպիսով նա մեծ այժ կը ստանայ։ Այդ պատճառով Գերմանիան չէ ցանկանում որ ընտրութիւնների նոր ձևը ընդունվի Ֆրանսիական պատգամաւորների ժողովից։

—

ԹԻՒՐՔԻԱ

—

Այս միջոցիս Հայաստանի գաւառներէն Պարիզ հասած տեղեկութիւնք ծանրակշիռ են։

Պայազիտի և Պուլանըղի կողմերը տեղական կառավարութիւնը կասկածոտ աչք սկսած է նայել Հայ ժողովրդեան վրայ և զգուշութեան խիստ միջոցներ ի գործ դնել։ Այս տարապարտ կասկածանաց դէմ նոյն գաւառաց ժողովուրդները բողոքած լինելով, Վարչական խորհուրդն երէկ գումարեցաւ Ամեն։ Արքազան Պարիզ հաւ նախագահութեան ներքև, իրաց այս վիճակը լրջապես ուշադրութեան առաւ, և լսելով այն անօրէնութիւնները՝ զորս տրգէն Ամեն։ Ս. Պարիզը փութացեր էր ի գործ դնել, թէ ալ քանի մ՝ ընդհանուր անօրէնութիւններ ըրաւ թէ այս անմոռահութեան և թէ հեռանալն եղող խռութեանց նկատմամբ։

Վարչութեան ըրած անօրէնութեանց վրայ գեռ չը կրցինք տեղեկութիւն մը քաղել. սակայն կը յուսամք որ իրենց նպատակին պիտի ծառայեն, մանաւանդ մեր այս յոյսն աւելի հաստատութիւն կը գտնէ, երբ կ՝իմանամք որ արգէն Բ. Դուռը խոստացած է պէտք եղած անմիջական անօրէնութիւններն ընել, և իրաց այս վիճակին վերջ տալ։

Սիմատյուլ լրագիրը կը ծանուցանէ թէ մայրաքաղաքիս թաղերուն մէջ գումարուած ներ ու բանախօսութիւններ անելն արգիլող Բ. Դրան հրամանագիրն ցունց Պարիզաքաղաքացիներն ալ գնացած է։

Ճերիաէի Հավատիս լրագիրն իւր այս աւուր թուով կը ծանուցանէ թէ այս տարի հրատարակուած Հայկական Արքացյցներն հին Հայաստանի թագաւորութեան, անկախութեան, գինուորական զօրութեան և այլ մանրամասնութեանց վրայ տեղեկութիւններ և խորհրդածութիւններ պարունակելուն պատճառաւ, հասարակային կրթութեան պաշտօնատան առաջարկին վրայ։ Առաջին նախարարն հրաման գրկեր է Պոլսոյ քաղաքապետութեան և նահանգաց կառավարիչներուն, որ այդ Արքացյցներուն շրջաբերութիւնն արգիլուի։

Երէկ Ս. Պարիզը հայերն առաջին նախարար Բարձր. Սայիտ փաշային գնաց, և երկարօրէն տեսակցելով, ժամանակէ մ՝ի վեր թէ մայրաքաղաքիս և թէ գաւառաց մէջ պաշտօնէից ոմանց կողմէ ցոյց տրուած բուռն եռանդին և կայսերական կառավարութեան կամաց հակառակ տեղի ունեցած գեղծմանց վրայ ընդհանուր ազգին զգացած ցաւալի տպաւորութիւնը յայտնելով, յանուն ազգին բողոքեց այն անվատահութեան ցոյցերուն դէմ, որք մերթ ընդ մերթ կը հրատարակին և բարեմիտ հասարակութիւնը կը գայթակղեցնեն։

Ս. Պարիզը յայտներ է թէ հայոց ազգը բնաւ երբէք Օսմանեան պետութեան դէմ անհաւատարմութիւն ցուցած և Օսմանեան կառավարութենէն բաժանուելու իղձ ունեցած չէ։ Այլ իւր փափաքն ու խնդիրքն եղած է և պիտի լինի միշտ իրենն յարմար և ժամանակիս պահանջած բարենորոգմանց մասին եղած խոստմանց գործադրութիւնը, բարենորոգմունք, որք ոչ միայն մասնաւորապէս հայոց, այլ նոցա բնակիչ եղող քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ ժողովրդոց վիճակին բարւոքման և կանոնաւորութեան համար հարկաւոր են։

Բարձր. առաջին նախարարը վատահացուցեր է զՍ. Պարիզը թէ խոստացեալ բարենորոգմունք երկու երեք ամսուան մէջ պիտի գործադրին, և յայնժամ փորձով ցոյց պիտի տրուի թէ կայսերական կառավարութիւնն երբէք կասկածած չէ հայոց ազգին հաւատարմութեան վրայ, և խոստացեր է պէտք եղած ազգու հրամանները տալ, որպէս զի օրինաց գործադրութեան չափազանց եռանդէ ծագած անանձնութիւնք անյապաղ դադրին։

(Մասնա)

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը. Այսօր ֆրանսիական պատգամաւորների ժողովում քննվում էր Բ ա մ օ ի առաջարկութիւնը XII թ-ի օրէնքը ջնջելու մասին, որի զօրութեամբ բոլոր գաւառութիւնները պարտաւոր են ունենալ իրանց առանձին գերեզմանոցները։ Բ ա մ օ է ն խիստ կերպով պարտաւորում էր այս առաջարկութիւնը, որպէս կոնկորդատին հակառակ։ Հաւատիսը պահանջում էր, որ այլազգաւանների համար առանձին տեղեր նշանակվեն ամեն գերեզմանոցներում։ Ե պ ի ս կ ո պ ո ս Ֆ ր է ա ի զ չէ հաստատում, որ Բամաի առաջարկութիւնը նպատակ ունենար կրօնական տարաձայնութիւն և գեղի կրօնը ունեցած յարգանքը պաշտպանել։ Գերեզմանների խառնելը, նպիսկոպոսի խոստովանութեամբ, կը խլէր կաթոլիկական եկեղեցու իրաւունքները և անհամբերութիւն ու հալածանքի նշան կը դառնար։ (Զախ կողմի վրա ազգակ)։ Կաթոլիկների աչքում, գերեզմանոցը եկեղեցու շարունակութիւնն է, նա հանգուցեալների տաճարն է, նա օծված է.—նա տուրբ է։ XII թ-ի օրէնքը չէր իրագործվում մի քանի մեծ քաղաքներում (օր. Փարիզում)։ բայց այդ դեռ չէ նշանակում, որ կաթոլիկ հանդիսները երբէք չը պէտք է գործ դնեն այդ օրէնքը։ Գերեզմանոցների չէզոքութիւնը հակառակում է կաթոլիկ եկեղեցու վարդապետութեանը. այդ առաջարկութիւնը զէպի եկեղեցին ունեցած թշնամութեան նշան է։ (Զախակողմում պատասխաններ)։ Ոչ բողոքականները և ոչ հրէաները XII թ-ի օրէնքի դէմ չեն։ այդ բոլոր ազգերը ազատ մտածողներն են գոնէ։ Զարմանալի է, թէ իրանք ինչպէս չեն վրդովվում այն բանի դէմ, որ նրանց կը թագնեն կաթոլիկների մէջ։ Սկսելով գերեզմանոցները սրբազործել, եկեղեցիներին էլ կը հասնեն, որոնց մէջ հերթով կազօթեն կաթոլիկները, բողոքականները, մահմեդականները և ազատ մտածողները։ (Աղմուկ)։ Անհրաժեշտ է երկիրը նախապատրաստել այս բանի դէմ։ Բ ա մ օ ազատախօսեց, որ իր առաջարկութիւնը բոլորովին թշնամական չէ կաթոլիկ եկեղեցուն։ ընդհակառակը, նա ցանկանում է ծառայութիւն անել նրան։ թէպէտ կաթոլիկ եկեղեցին ազատագատ է Ֆրանսիայում, բայց մանաւանդ միւս եկեղեցիներն նա պահութեան կողմից հաւասար հովանաւորութիւնը պէտք է վայելեն։ Գերեզմանոցները զանազան եկեղեցիների մէջ չեն բաժանվում, այլ ամբողջապէս պատկանում են կաթոլիկ եկեղեցուն և սրբագործվում են նրանից, բացի մի անկիւնից, որը անիծվում է և նշանակվում է այլազգաւանների, անմեղապանների և պատժվածների թաղելու համար։ Այս անկիւնը ամենայի նշանակութիւն ունի։ Այն ինչ գերեզմանոցները միայն կաթոլիկներին չեն պատկանում, այլ բոլոր հանայնքին։ Ճառախօսը մի քանի օրինակներ բերեց, որանք վկայում էին, որ մինչև անգամ փարիզի մերձակայ շրջակայքում բոզրականներին արգելում են ընդհանուր գերեզմանոցում թաղել, և պահանջում էր, որ այս գեղծումներին վերջ դրվի։ Նրա առաջարկութիւնը ընդունվեցաւ 348 ձայների առաւելութեամբ 126-ի դէմ։

—«Լիկտերի ընկերութիւնը» թէկրանից հեռագրում են մարտի 11-ից հետևեալը. «Փիրդերը հանգիստ են։ Պարտից հետևակ զօրքի ինն գունդեր զեռեցված են Ուրմիայի և Խոյի մէջ։ ութ գունդեր գնացին Սուլեյմանիան և Սալենկալեաը պաշտպանելու համար։ Այժմ չեն կարծում, որ քրդերի նոր ապստամբութիւն կարող է լինել։

—Լրագիրները հաղորդում են, որ Գիզի քաղաքային խորհուրդը, Լենան գէպարտամենտում, վճռեց վերոյիշեալ քաղաքի հասարակական հրապարակներից մէկի վրա կանգնացնել կամիլ Դեմուլենի արձանը, որը ծնվել է Գիզում մարտի 2-ին, 1760 թուին։

—Իտալական լրագիրները հաղորդում են, որ Հռոմում գերմանացի նկարիչների մէկ գեղարուեստական հանդէս է բացված գերմանական դեսպանատան մէջ։ Հանդիսում դուրս են բերված հարիւր պատկերներ և 30 քանդակագործութիւններ։

—Փարիզից հաղորդում են մարտի 9-ից, որ այդ օրը բոլորովին սրվեց «Au Printemps» յայտնի անապին մագազինը։ Միայն կասան կարգացան ապատեղ։ Հարեան չինութիւնները նոյնպէս ազատված են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի։ Ս. Պետերբուրգի քաղաքապետ նշանակված է կովնայի նահանգապետ Բարանով։ Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանողները խընդրեցին բէկտորից ազատել նրանց մի քանի ընկերներից, որոնք քաղաքական կողմից անբարեմիտ են։ Բազմաթիւ գիւղացիներ գալիս են Ս. Պետերբուրգ Ազատագրողը վերջին նոր հանդիսապետ Բարանովի։ Ս. Պետերբուրգ համալսարանի ուսանողները խընդրեցին բէկտորից ազատել նրանց մի քանի ընկերներից, որոնք քաղաքական կողմից անբարեմիտ են։ Բազմաթիւ գիւղացիներ գալիս են Ս. Պետերբուրգ Ազատագրողը վերջին հրաժարական ոգջոյն ասելու համար։ Դատաստանը Բիսաիովի և միւս չարագործների մասին կը կայանայ մարտաւարագս մարտի 20-ին։ Ամեն օր չարագործներ են կալանաւորվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 75 կ., երկրորդ 214 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 98 կ։ Գուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,62 պէնս, Համբուրգի վրա 125,12 պէնս, ուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ, Փարիզի վրա 261 ֆրանկ 25 սանտիմ։

Խմբագիր—Հրատարակող ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ